

ՊՈԽԱՎԱՊԱՐՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅՆՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՐԱԶԿ ՀԱՂՈՐՋԱՆՑԱՆ

Բառապաշարի համակարգայնության դրսևորումներից մեկի՝ բազմիմաստությունից համանունության փոխհարաբերության հարցի ուսումնասիրությունը իր երկարամյա պատմությունն ունի: Թե՛ հայերենական և թե՛ արտասահմանյան լեզվաբանները հայտնել են ամենատարբեր տեսակետներ. այդ հարցին է ներգրավվել 1960 թվականի հանրահայտ բանավեճը¹, Առաջարկվել են բազմիմաստ և համանուն բառերի տարբերակման բազմաթիվ հնարքներ ու եղանակներ, սակայն մինչև օրս էլ դրանցից ոչ մեկը օբյեկտիվ, հիմնական և ընդհանրական չափանիշ չէ, այլ կողմնակի, օժանդակ, ոչ հիմնական միջոց: Մենք ստեղծել և հայտնեն ու ուսուցանեն լեզուների բառապաշարից ընտրած նույնանվանական բառաշխանների վրա (նհն) փորձարկել ենք վերլուծության որոշակի ապարատ, որը, հիմք ունենալով դրանց իմաստաբանական դաշտերի կառուցվածքային առանձնահատկությունները, հնարավորություն է տալիս իրագործել նշված տարբերակումը: Համառոտ ներկայացնենք վերլուծության ապարատը:

1. Օգտագործելով լեզվի տարբեր մակարդակներում հանդես եկող նույնական երևույթների համար Գ. Զահեկյանի առաջարկած ըմբռնումների ու տեղափոխության միասնականացման փորձերն ու զաղափարը², նույնանվանական բառաշխանները (նհն) դիտել ենք իբրև մարկատներ, դրանց նշանակությունները՝ իբրև սուբմարկատներ և վերջիններս ենթարկել բաղադրական վերլուծության՝ առանձնացնելով նհն-ի իմաստային ողջ դաշտի միավորող և ամեն մի սուբմարկատի (բառիմաստի) տարբերակող հատկանիշները՝ իմաստությունները: 2) Մեկլեզվյան մարկատներից յուրաքանչյուրի իմաստային դաշտը ներկայացրել ենք նրա բաղադրիչ սուբմարկատների իմաստային նվազագույն՝ երկանգամ հակադրությունների՝ մեկլեզվյան իմաստազույգերի ձևով, նույնը կատարելով նաև երկլեզվյան լծորդություն ներկայացնող մարկատների համար, իբրև դրանց իմաստային դաշտերի և սուբմարկատների համադրում՝ ստանալով երկլեզվյան իմաստազույգեր: 3) Նրկանգամ աղյուսակներում կատարել ենք մեկլեզվյան իմաստազույգերի վերլուծություն: Ուրոշել ենք դրանց ներքին իմաստային երկանգամ հարաբերությունների բնույթը ինչպես հարաբերության և նրա կրողների, այնպես էլ հատկանիշի ու նրա կրողի միջև եղած կապերն արժեքավորող հետևյալ անվանակարգն ստեղծելով. նույնություն-ինքնիմաստություն (աուտոսեմիա), նույնանմանություն-մերձիմաստություն (պերիսեմիա), նմանություն-հարիմաստություն (պարասեմիա), տարանմանություն-հեռիմաստություն (ապոսեմիա), տարբերություն-տարիմաստություն (դիսսեմիա): 4) Ցուրաքանչյուր նհն-ի իմաստային համակարգի սահմաններում այդ արժեքավորող ապարատի միջոցով քանակապես արտահայտել ենք բազմիմաստական և համանունական վիճակների նկատմամբ դրսևորած ձգտման տոկոսային ցուցիչը: 5) Նույնպիսի հաշվարկ ենք արել նաև երկլեզվյան իմաստազույգերի գնահատման հիման վրա, որի միջոցով հնարավորություն ենք ստացել երկու տարբեր լեզուների լծորդվող նհն-ի մարկատների համարժեքության աստիճանը որոշել քանակական ցուցիչներով:

¹ «Лексикографический сборник», вып. IV, М., 1960.

² Г. Б. Джаукян, Общее и армянское языкознание, Ереван, 1978, с. 80—81.

Նույնանվանական բառանշանների իմաստային կառուցվածքի վերլուծության ապարատի և նրա հինգ տիպի հարաբերությունների տեսական հիմնավորումն է նախ՝ Գ. Զահուկյանի այն պնդումը, ըստ որի փոփոխության ընդհանուր կարգի մեկնաբանության մեջ անհրաժեշտ է հաշվի առնել անցումային լիճակները³ և երկրորդը՝ է. Աթալյանի այն միտքը, ըստ որի ամեն մի նշանի իմաստում առկա են որոշ «ոչ համակարգային գործոններ», որոնց հաշվառումը օժանդակում է նշանի իմաստային համակարգերը «ներսից պայթեցնող» անցումային երևույթների ճանաչմանը⁴։ Ապարատի գործնական հուսալիությունը ապահովվում է ինչպես նշանի իմաստային կառուցվածքի մեջ աստիճանավորված ձևով ներթափանցել թույլատրող երկանդամ աղյուսակների կիրառությամբ, այնպես էլ սուբմարկատների երկանդամ հակադրությունների կամ իմաստազուգների օգտագործմամբ, որին ձեռնարկել ենք Ռ. Մանուշարյանի խորհրդով⁵։

Սակայն մեր նպատակը նշված ապարատի ստեղծման և ՆՖՆ-ի վերլուծության հետ կապված հարցերի վրա կանգ առնելը չէ (դա առանձին հաղորդման նյութ է), այլ այդ ապարատի օգնությամբ կատարված վերլուծության արդյունքների մշակման և ընդհանրացման այնպիսի միջոցի օգտագործումը, ինչպիսին փոխկաղապարումն է։

Ինչպես և երևում է ապարատի վերլուծական բովանդակությունից, այն հիմնականում իրագործում է բազադրական վերլուծություն։ Սակայն վերջինս հաջողությամբ կիրառելի է միայն հետադետուկյան կոնկրետ օբյեկտների՝ բազմիմաստ և համանուն բառերի նկատմամբ, որոնք ներկայացնում են բազմիմաստությունը և համանունությունն ընդհանրապես (ընդհանուր օբյեկտներ)։ Բացի այդ, մեր ուսումնասիրության մեթոդիկան, ուղղված լինելով երկու լեզուների բառապաշարին, դառնում է լեզվական դուզադրությունների մեթոդիկա, որը ներկայացնելու համար բավական է գործ ունենալ բառապաշարի համակարգայնության մի քանի դրսևորումների՝ ընդհանուր օբյեկտների հետ։ Նըշանակում է, մեզ պետք է նաև ձեռնարկացման այնպիսի հնարանը, որը թույլ տա երկու լեզուներից վերցված նույնանվանական բառանշանների ներքին կառուցվածքն ուսումնասիրելուց հետո նախ պարզել բազմիմաստ և համանուն բառերի համակարգերում երկու լեզուների համար ընդհանուր արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունների բնույթը, ապա հետևողականորեն վերլուծել բազմիմաստության և համանունության համակարգային կապերը ՆՖՆ-ի սահմաններում։ Բերված նկատառումները ենթադրում են Գ. Զահուկյանի առաջարկած փոխկաղապարմանը դիմելու անհրաժեշտությունը։ Այդ մեթոդը, մի կողմից՝ օգնում է սիմվոլների և գծագրման միջոցով ցուցադրել համակարգի տարրերի փոխհարաբերությունները (կախումները), մյուս կողմից՝ հնարավորություն է ընձեռում «կաղապարների գործառական վերափոխման» կաղապարների բազադրիչներից մեկից մյուսին և մեկ կաղապարից մյուսին անցնելու համար»⁶։ Այդ նպատակով էլ հեղինակն առաջարկում է ռելյացիայի և մարկացիայի ըմբռնումներն ու տերմինաշարերը⁷։ Գ. Զահուկյանի առաջարկած սկզբունքին դիմելու նպատակահարմարությունը հաստատվում է նախ և առաջ հետևյալով. «Փոխակերպման մեթոդի կիրառումը... բխում է նրանից, որ բովանդակության պլանի միևնույն միավորը կարող է դրսևորվել արտահայտության պլանի տարբեր միավորներով (լայն իմաստով համանիշությունը) և հակառակը (համանունությունը և բազմիմաս-

3 Նույն տեղում, էջ 81։

4 Յ. Ք. Ատայն, Семантика и проблемы коммуникации (в сб. «Языковая единица как знаковая система», Ереван, 1981, с. 24)։

5 Ք. Ս. Մանուչարյան, Регулярная многозначность в русском и армянском языках («Русский язык в армянской школе», 1978, № 6, с. 36)։

6 Դ. Բ. Դաուկյան, նշվ. աշխ., էջ 76։

7 Նույն տեղում, էջ 80—81։

տուությունը»⁸։ Բացի այդ, փոխկադապարման անհրաժեշտությունը հաստատվում է նաև ուսումնասիրության ընթացքում ինչպես «առանձին կադապարի (մեկլեզվյան)» ստեղծման, այնպես էլ «առանձին կադապարների ընդհանրացման», այսինքն՝ ինչ-որ շահով լեզվական ընդհանրական կադապարի» հաստատման հնարավորություններով⁹, մի բան, որն ամբողջովին ընդունելի է երկու լեզուների բառապաշարի համար ընդհանուր նույնանունության և անմիանշանակության էական օրինաչափությունների վերհանման առումով։


Կադապարմանը դիմելը տվյալ դեպքում կարևոր է նրանով, որ Յու. Ապրեսյանի արտահայտած բազմիմաստության և համանունության տարբերակման «հարաբերականության» դեմ առարկելով¹⁰, միաժամանակ հետևում ենք նրա խորհրդին՝ դիմել լեզվական երևույթների որոշման հնարքների այնպիսի ձևավականացման, որ արդյունքում նրա փոքրաթիվ հատկանիշներով հնարավոր լինի օբյեկտների բազմությունն նկարագրել¹¹։

Կադապարը ստեղծվում է իբրև նույնանունության կառուցվածքի և ուսումնասիրվող այլ երևույթների «որոշակի նմանակ» (Գ. Զահուկյան), որը հնարավորություն է տալիս այդ երևույթը նկարագրել առավել ռացիոնալ ձևով։ Մեր մոտեցման հիմքում դրված ձև այն ընդհանուր պահանջները, որ ներկայացնում է Գ. Զահուկյանը համընդհանուր կադապարմանը¹²։

Մեր ուսումնասիրության մեջ, հենց սկզբից այն վարկածն է առաջադրվում, ըստ որի նույնանունության կառուցվածքը որոշվում է անմիանշանակության (բազմիմաստության) և բառերի նույնաձևության փոխհարաբերությամբ։ Ընդհանուր վարկածն իբրև կադապար ներկայացնելու համար ընդունենք հետևյալ կրճատումներն ու սիմվոլները ռեկացիայի տեղմիներով. Ռ—ռեկատներ՝ բազմիմաստությունը և համանունությունը (ՌԲ) և (ՌՀ), Ռ—ռեկատորներ՝ նույնանունությունը և անմիանշանակությունը (ռՆ) և (ռԱ), նշանները՝ (→)—լրացում, կազմում, (←)—հանում, (—)—համընկնում կամ նույնություն, (↔)—փոխանցում, տեղափոխություն, (→ —)—փոխարինում (≈)—նույնանմանություն, (:)—նմանություն, (—)—տարանմանություն, (≠)—համընկնում կամ տարբերություն, (=?)—պայմանական համընկնում։ Այս դեպքում մեր ելակետային վարկածը (համասեռ կադապար 1) կարելի է ներկայացնել հետևյալ սիմվոլներով. (ՌԲ = ՌՀ) → (ռՆ = ռԱ), այսինքն՝ միմյանց համակարգայնորեն լրացնող ռեկատների՝ բազմիմաստության և համանունության համընկնումը ենթադրում է դրանց ռեկատորների՝ նույնանունության և անմիանշանակության համընկնում։

Ներկայացնենք նաև բազմիմաստության և համանունության ռեկատների կադապարման գծագիրը (կադապար 0-ն), որը նույնանունության և անմիանշանակության ռեկատորները վարկածայնորեն համակարգակազմիչ են¹³։

Կադապար 0



⁸ Նույն տեղում, էջ 54։

⁹ Նույն տեղում, էջ 73։

¹⁰ Ю. Д. Апресян, Лексическая семантика, М., 1974, с. 185.


¹¹ Նույն տեղում, էջ 118։

¹² Г. Б. Джаукян, Եզ. աշխ., էջ 78—79։

¹³ В. М. Солнцев, Язык как системно-структурное образование, М., 1977, с. 51.

Փոխկաղապարման սկիզբը կաղապար 1-ն է, արտածականորեն կառուցված լեզվաբանության այն փաստերի հիման վրա, ըստ որոնց բազմիմաստությունը և համանունությունը ներկայացնում են նույնանունություն և անմիանշանակություն՝ վերջինիս «նույնություն-նմանության-տարբերություն» աստիճանացույցի վրա ունեցած անցումներով: Ընդունելով, որ նույնանվանական բառանշանը ներկայացնում է կաղապար 0-ի ռեկյատներ բազմիմաստությունը և համանունությունը, անհրաժեշտ է ընդունել նաև, որ այն կարող է համապատասխանել բազմիմաստության ռեկյատի մարկատ (ՔՌՄ) և համանունության ռեկյատի մարկատ (ՀՌՄ) ըմբռնումներին: Ընդ որում նույնանունության և անմիանշանակության ռեկյատները դառնում են մարկ—(մ): Այժմ կունենանք հետևյալ կաղապարը.

կաղապար 1



Այս կարելի է հաղորդել սիմվոլներով ($\text{ՔՌՄ} = \text{ՀՌՄ}$) → (մ'ն = մ'Ա), այսինքն՝ համանունության ռեկյատի մարկատի հետ համընկնող բազմիմաստության ռեկյատի մարկատը ավելանում է նույնանունության և անմիանշանակության մարկերին:

Ապագա փոխակերպման հնարավորությունը՝ երկու մարկի հետագա մարկավորումը (մարկ նույնանունությունը և մարկ անմիանշանակությունը) արտահայտենք այսպես. մ'ն → (մ'նույն. → մ'նման. → մ'տարբեր.) և մ'Ա → (մ'նույն. → մ'նման. → մ'տարբեր.), այսինքն՝ նույնանունության մարկը փոխարինվում է նույնանունության ենթամարկով, քանի որ հնարավոր է (մ'նույն. → մ'նման. → մ'տարբեր.) տեղաշարժը, ինչպես և անմիանշանակություն մարկն է փոխարինվում անմիանշանակություն ենթամարկով, քանի որ հնարավոր է (մ'նույն. → մ'նման. → մ'տարբեր.) տեղաշարժը:

Կաղապար 0-ն կաղապար 1-ի փոխակերպելու գործառությունը համապատասխանում է Գ. Զահուկյանի հանձնարարականներին, մասնավորապես տարասեռ կաղապարում համասեռի տարրերի կրկնության, ինչպես և համասեռ կաղապարի որևէ կառույց այլ կառույցով փոխարինելու¹⁴ հիման վրա:

ՆՅՅ փոխկաղապարման սկիզբը արտածական էր, ապա հաջորդող բոլոր կաղապարներն արդեն ստեղծվում են վերլուծության մեր ապարատի միջոցով բոլոր նույնանվանական մարկատների ուսումնասիրության արդյունքների հիման վրա, այսինքն՝ կաղապարման շարունակությունը դառնում է մակա-

¹⁴ Г. Б. Джаукян, նշվ. աշխ., էջ 75:

Նույնանվանական 10 մարկատների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ միայն 4-ը (ДОМ, անուն, շԱՁՅ, ԱՄԻԱ) կարելի է դիտել իբրև բազմիմաստություն, որոնց ներսում 33 ենթամարկատները հանդես են գալիս իբրև կանոնավոր կամ համակարգ կազմող բազմություն, 6-ը (СТАН, КЛЮЧ, իրան, ալ, աչք, տուն)՝ համանունության ուսումնասիրության մարկատներ։ Վերջիններիս կառուցվածքը աչքի է ընկնում 70 ենթամարկատների ժայռահեղ անհամակարգայնությամբ։

Միավորելով 10 նույնանվանական մարկատների վերաբերյալ այս պատկերացումները «անմիանշանակություն» և «նույնանունություն» մարկերի հետ, որոնք նախկինում բազմիմաստության և համանունության ուսումնասիրության էին, երկրորդ կադապրը ներկայացնենք միայն սիմվոլներով. $2\text{ՌՄ} \rightarrow (\text{մ}^{\prime}\text{ն} = \text{մ}^{\prime}\text{Ա})$, բայց $\text{ՐՌՄ} \rightarrow (\text{մ}^{\prime}\text{ն} \neq \text{մ}^{\prime}\text{Ա})$ կամ $\text{ՐՌՄ} \leftarrow (\text{մ}^{\prime}\text{ն} = \text{մ}^{\prime}\text{Ա})$; Հնարավոր է $\text{մ}^{\prime}\text{Ա} \rightarrow \text{—} \text{մ}^{\prime}\text{Բն}$, եթե $\text{մ}^{\prime}\text{Ա} = (\text{մ}^{\prime}\text{նույն. } \rightarrow \text{մ}^{\prime}\text{նման. } \rightarrow \text{մ}^{\prime}\text{տարբեր.})$ $\text{մ}^{\prime}\text{Ա}$, այսինքն՝ համանունության ուսումնասիրության մարկատը կազմվում է նույնանունության և անմիանշանակության համընկնող մարկերից, իսկ բազմիմաստության ուսումնասիրության մարկատը կազմվում է նույնանունության և անմիանշանակության չհամընկնող մարկերից կամ էլ բազմիմաստության ուսումնասիրության մարկատների համար հանվում է նույնանունության և անմիանշանակության համընկնումը։ Հնարավոր է մերկ անմիանշանակությունը ($\text{մ}^{\prime}\text{Ա}$) փոխարինել մարկ բազմանշանակությամբ (Բն)։

Նյութի հետագա կադապրավորման նպատակով ցուցադրենք բոլոր 10 մարկատների ներքին իմաստային հարաբերությունների քանակական գնահատումները, որտեղ պարզ երևում է ինչպես յուրաքանչյուր մարկատի բազմիմաստական կամ համանունական խմբին պատկանելը, այնպես էլ յուրաքանչյուրի բազմիմաստացման և համանունացման աստիճանը։

Բազմիմաստության և համանունության մարկատների
քանակային կառուցվածքի աղյուսակ

№	Բազմիմաստության ուսումնասիրության մարկատ		=	≈	:	—	≠	Իմաստազույգեր
1	անուն		7	8	14	12	8	49
2		ДОМ	10	14	34	22	20	100
3		ИМЯ	11	12	44	34	20	121
4		ГЛАЗ	5	2	8	8	2	25
բոլորը ուսներենում			26	28	86	64	42	246
ամբողջը միասին			33	36	100	76	50	295
համանունության ուսումնասիրության մարկատ								
5	տուն		18	22	32	76	176	324
6	իրան		9	6	4	14	48	81
7	ալ		10	4	4	29	53	100
8	աչք		21	10	18	101	291	441
բոլորը հայերենում			58	42	58	220	568	946
9		СТАН	5	—	4	—	16	25
10		КЛЮЧ	7	4	6	8	24	49
բոլորը ուսներենում			12	4	10	8	40	74
ամբողջը միասին			70	50	68	236	608	1020

Ենելով անմիանշանակության ռելյատորի (կադապար 0) կամ մարկի (կադապարներ 1, 2) կազմած հինգ տիպի իմաստազույգերի հանրագումարն ուսումնասիրելու անհրաժեշտությունից, այդ մարկը դարձնենք ենթամարկ՝ ներկայացնելով այն իբրև նույնության, նույնանմանության, նմանության, տարանմանության և տարբերության գծային հաջորդականությունը: Սակայն, քանի որ հանգել ենք բազմիմաստությունն իբրև նույնանունության ու բազմանշանակության, իսկ համանունությունն իբրև նույնանունության ու անմիանշանակության համակարգային հարաբերություններ դիտելուն, ապա այն արտացոլենք հաջորդ կադապարներում:


կադապար 3

Բ ա Վ Մ ա ն շ ա ն ա կ ու թ յ ու ն					
հայերեն	նշանակում	նմանություն	տարանմանություն	տարբերություն	
=	≈	:	-	≠	
Հայերեն 49 խնայողություն	7	8	14	12	8
Խոսքեր 246 խնայողություն	26	28	86	64	42
Ն ա յ ն ա ն ն ա կ ու թ յ ու ն					

Այստեղ գործ ունենք հագեցած նույնանվանական մարկատների հետ, որոնք նախորդ՝ 2-րդ կադապարում հանդես եկան իբրև բազմիմաստության ռելյատի մարկատներ: Դրանց ենթամարկատները (մ) միավորված են իմաստազույգերում (Ձմ): Ներկայացնենք սիմվոլային կադապարը. (ԲՁմ←մ'Ա)→(մ'Բն=մ'ն) կամ ԲՁմ → ((մ'նույն. → մ'նույնանման. → մ'նման. → մ'առանման. → մ'տարբեր.) մ'Բն = մ'ն), այսինքն՝ բազմիմաստության ենթամարկատների պուլգի համար անմիանշանակության մարկը հանվում է և նրանք լրացվում են նույնանունության հետ համընկնող բազմանշանակության մարկով կամ բազմիմաստության իմաստազույգերը կազմվում են նույնություն, նույնանմանություն, նմանություն, տարանմանություն, տարբերություն աստիճանացուցով տեղաշարժվող բազմանշանակության և նույնանունության մարկի համընկնումից: Էական է, որ 3-րդ կադապարը ցույց է տալիս բազմիմաստության համակարգայնությունը: Նրա առաջատար հատկանիշը նույնանունությունն է, որն իր էությունը լծորդվում է բազմանշանակության հետ:

Այժմ անցնենք համանունության կադապարմանը ըստ նույն տվյալների ու ելակետային պայմանների, ինչ որ նախորդ դեպքում: Վերցրած օրինակներում հայերենի համանունական 946 իմաստազույգերից 8-ը խախտում են նույնանունությունը իբրև համահունչներ: Հետևաբար այն ևս կարելի է ծավալել՝ մտցնելով նշանակիչի երկու չափանիշներ. նույնություն՝ համանունների հիմնական զանգվածի համար, և նույնանմանություն՝ նշված 8 իմաստազույգերի համար: Նույնանունության մարկի մասնական վերածումը երկու սուբմարկի կարող ենք ընդունել իբրև համանունության ողջ կառուցվածքի վրա ազդող գործոն: Կադապարի մեջ ընդգրկենք նաև անմիանշանակության մարկը, առանց նրա հինգ տեղաշարժերին անդրադառնալու, քանի որ նախորդ կադապարում այդ ամենն արդեն կա: Համանունության գրաֆիկական կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

կաղապար 4



Բերենք այս կաղապարի սիմվոլիկ ձևը. $\lambda_2 m \rightarrow (m' U = ? m' n)$, քանի որ m' (m' նույն. $\rightarrow m'$ նույնանման.) կամ $\lambda_2 m \rightarrow (m' U = ?)$ (m' նույն. $\rightarrow m'$ նույնանման.) ն. ալսինքն՝ համանունական իմաստազույգերը կազմվում են անմիանշանակության և նույնանունության պայմանականորեն համընկնող մարկերից, քանի որ նույնանունությունը բնութագրվում է նույնության և նմանության որոշակի տեղաշարժերով կամ համանունության իմաստազույգերը կազմվում են անմիանշանակության և նույնանունության պայմանական համընկնումով:

Այսպիսով, I. կաղապարային պատկերացում ստանալով նույնանունության կառուցվածքի վերաբերյալ (ըստ բազմիմաստության և համանունության ռելյատիվության), պարզեցինք. I. նույնանունության մարկի հաստատուն լինելը բազմիմաստության բոլոր դեպքերի համար և նրա անբավարարությունը համանունության կառուցվածքում թույլ են տալիս այն դիտել բազմիմաստության համար իբրև համակարգակազմիչ հատկանիշ, մինչդեռ համանունության համար՝ միայն իբրև ձեռքբերովի հատկանիշ: Առաջին դեպքում նույնանունությունը հանդես է գալիս իբրև ռեզյուլտ համակարգի օբյեկտների (տարրերի) որակական որոշակիություն և արտացոլում է նրա էությունը¹⁵, իսկ երկրորդ դեպքում հանդես է գալիս իբրև ձեռքբերովի հատկանիշ, որը կցորդվում է անմիանշանակության մարկին, ուղեկցում նրան: 2. Բազմիմաստության համար նույնանունությանն ուղեկցող, կցորդված, ձեռքբերովի հատկանիշ կարելի է դիտել բազմիմաստական համակարգում հանդես եկող բազմաթիվ սուբմարկատների փաստը, այսինքն բազմիմաստության մարկը: 3. Համանունության երկու մարկերից առավել հաստատուն է անմիանշանակության մարկը, որը հանդես է գալիս համանունության մարկատի իմաստային կառուցվածքում իբրև մի քանի նշանակություն-սուբմարկատ, ուստի անմիանշանակությունը դիտում ենք իբրև համանունության համակարգակազմիչ հատկանիշ: 4. Բազմիմաստության նույնանունական կառուցվածքը ներկայանում է բազմանշանակության մարկի հետ իբրև անպայման համակարգ, մինչդեռ համանունության նույնանունությունը խախտված լինելով և համակարգակազմիչ չլրանալով՝ հարաբերում է անմիանշանակությանը միայն որպես պայմանական համակարգ:

II. Այժմ փոխկաղապարման հաջորդ աստիճանում փորձենք ցույց տալ, թե բազմիմաստությունը և համանունությունը արգլո՞ք կազմում են ընդհանուր համակարգ: Դրա համար միավորենք լեզուների բազմիմաստության և համանունության իմաստազույգերը, մարկերը ներկայացնենք իբրև սուբմարկատներ, ընդ որում, բովանդակության պլանում բազմիմաստության համար


¹⁵ В. М. Солнцев, *Եղվ. աշխ.*, էջ 51—52:

կիրառենք «բազմանշանակություն», իսկ համանունության համար՝ «անմիանշանակություն» մարկը:

Բազմիմաստության և համանունության փոխհարաբերությունը կարելի է պատկերել հետևյալ՝ 5-րդ պիմվոլիկ կաղապարով. $P2մ \leftarrow Z2մ$, քանի որ $P2մ \rightarrow մ'ն = \{ (մ'նուլն. \rightarrow մ'նուլնանման. \rightarrow մ'նման. \rightarrow մ'տարանման. \rightarrow մ'տարբեր.) մ'Բն \}$, իսկ $Z2Մ = \{ մ'Ա = մ'նուլն. \rightarrow մ'նուլնանման. \}$ մ'ն): Այսինքն, հայերենի և ռուսերենի բազմիմաստական իմաստազույգերը չեն կաղմվում նույն լեզուների համանունական իմաստազույգերից, քանի որ բազմիմաստության իմաստազույգերը կաղմվում են նույնանունության և, մյուս կողմից, նույնության- նույնանմանության- նմանության-տարանմանության-տարբերության աստիճաններով տեղաշարժվող բազմանշանակության մարկերի համընկնումից, իսկ համանունության իմաստազույգերը կաղմվում են անմիանշանակության և, մյուս կողմից, երբեմն նույնության ու նույնանմանության տեղաշարժեր ունեցող նույնանունության մարկերի պայմանական համընկնումից:

Այս կաղապարից երևում է, որ բազմիմաստությունն ու համանունությունը միասնական համակարգ չեն կաղմում: Նույնանմանական մարկատների համակարգային հարաբերությունները բազմիմաստության համար նրա ներքին հարաբերություններում օրինաչափ են, իսկ համանունության դեպքում՝ իբրև միջնաշաղկի փոխհարաբերություն, համակարգ չի դիտարկվում: Ըստ էության՝ բնութիւն ու համակարգային 5-րդ կաղապարը միավորում է 3-րդ և 4-րդ կաղապարները:

1. Այս ամենը թույլ են տալիս ներկայացնելու նոր՝ 6-րդ կաղապարը, որի մեջ անդրադառնում ենք իբրև մարկատներ, սուբմարկատներ և դրանց իմաստազույգեր ուսումնասիրված բազմիմաստության և համանունության ռելյատիվներին: Վերանայք նաև «նույնանունություն» և «անմիանշանակություն» բազմանշանակություն» մարկերի լրացուցիչ մարկացիայից, դիտենք դրանց իբրև ռելյատիվներ, այսինքն՝ վերադառնանք վարկածային 0 կաղապարին: Կատարված պարզեցումը այստեղ օրինաչափ է, եթե ելնենք լեզվաբանների ներկայացրած պահանջներից, ըստ որոնց, որևէ բազմության լրիվ և անմնացորդ նկարագրությունը կատարվեր փոքրաթիվ տարրերով:



2. Բոլոր վեց կաղապարներից կարելի է հետազոտել անել, որ բազմիմաստությունը և համանունությունը ընդհանուր համակարգ չեն կաղմում, քանի որ՝ ա) նշանակելիի տարբեր հատկանիշներ ունեն (բազմանշանակություն և անմիանշանակություն):

բ) Բազմիմաստության առաջատար և համակարգակաղմիչ հատկանիշը նույնանունությունն է, իբրև համակարգի ամեն մի անդամի (բազմիմաստական համակարգի յուրաքանչյուր սուբմարկատի) որակական որոշակիություն, որն արտացոլում է տարրի բնույթը:

գ) Սակայն բազմիմաստության համար բազմանշանակությունը «հիմ-

նեկայացնենք 6-րդ կաղապարը. $ՌԲ \neq ՌՀ$, $ՌԲ \rightarrow (ռն = աԲն)$, քանի որ $ռԱ \rightarrow \text{—} Բն$, $ՌՀ \rightarrow (ռԱ = ? \text{ } աԲն)$, այսինքն՝ բազմիմաստություն և համանունություն ռելյատիվները միմյանց չեն համապատասխանում, քանի որ առաջինը կաղմվում է նույնանունության և բազմանշանակության ռելյատիվների անպայման (համակարգային) համընկնումից, իսկ երկրորդը՝ նույնանունության և անմիանշանակության ռելյատիվների պայմանական (ոչ համակարգային) համընկնումից:

նական հնարավորությունը (պոտենցիան)» 25¹⁶, այլ սոսկ հատկանիշ, որ ձեռք է բերված նույնանունությունից՝ համակարգային հարաբերությունների շնորհիվ, այլ կերպ՝ բազմանշանակությունը բազմիմաստ բառերի ձեռքբերովի հատկությունն է:

դ) Բազմիմաստության էությունը կապված է ներնշանային հարաբերությունների հետ, այսինքն նրա համակարգայնությունը դրսևորվում է սուբյեկտ-կատների փոխհարաբերություններում, այն դեպքում, երբ համանունության էությունը իր գոյությունը սկսելով ներիմաստային հարաբերություններում իբրև պարզ տարբերություն, հետզհետե ծավալվում է, խախտում ներնշանային համակարգի միասնությունը և մտնում միջնշանային հարաբերությունների ոլորտը: Այլ կերպ ասած, սուբյեկտների երկանդամ հակադրություններն իբրև բազմիմաստության իմաստազույգեր ցույց են տալիս ներքին և համակարգային նմանություններ և տարբերություններ, իսկ դրանց հակադրումն իբրև համանունների իմաստազույգեր՝ ցույց են տալիս արտաքին, ոչ համակարգային նմանություններ ու տարբերություններ:

ե) Բայց և այնպես բազմիմաստությունն ու համանունությունը բառապաշարի համակարգայնության արդյունքն են, եթե դրա տակ հասկանանք դիտարկվող բառանշանների ենթահամակարգային ամբողջության մեջ գտնվող այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են նույնանունությունը, անմիանշանակությունը, բազմանշանակությունը, որոնց շուրջ խմբավորվում, կազմակերպվում են ինքնըստինքյան տարբեր կերպով համակարգային տարբեր երևույթներ, այդ թվում բազմիմաստությունն ու համանունությունը:

3. Վեց կադապարների շարքի հիման վրա կարող ենք առաջարկել երկու արդյունքային և եղրափակող կադապարներ՝ նախապես տրված ելակետային կադապարի հետ հարաբերակցելու համար:



Բազմիմաստության արդյունքային կադապարը հետևյալ տեսքն ունի.

Կադապար 7

Սիմվոլների միջոցով արտահայտելու դեպքում կունենանք. $\text{ԲԻՄ} \rightarrow (\text{մ}^{\text{ն}} = \text{մ}^{\text{հ}})$, այսինքն՝ բազմիմաստության ռեկատի մարկատը կազմվում է նույնանունության և բազմանշանակության համակարգայնորեն համընկնող մարկերից:

.Համանունության արդյունային կադապարը հետևյալ տեսքն ունի.

Կադապար 8



Կադապարը սիմվոլներով կարտահայտվի հետևյալ կերպ. $\text{ՀԻՄ} \rightarrow (\text{մ}^{\text{ն}} = ? \text{մ}^{\text{հ}})$, այսինքն՝ համանունության ռեկատի մարկատը կազմվում է անմիանշանակության և նույնանունության մարկատի ոչ համակարգային (պայմանական) համընկնումից:

Այսպիսով, բազմիմաստությունը և համանունությունը՝ իբրև բառապաշարի համակարգային դրսևորումներ, միասնական համակարգ չեն կազմում, քանի որ օրինաչափ է դրանց հակադրությունը՝ իբրև հետևյալ եզրերի. համակարգայնություն — անհամակար-

¹⁶ В. В. Виноградов, О грамматической омонимии в русском языке («Русский язык в школе», 1940, № 1, с. 17).

զայնություն, ներնշանային հարաբերություններ—միջնշանային հարաբերություններ, նույնանունության և բազմանշանակության հարաբերություն—անմիանշանակության և նույնանունության հարաբերություն:

ИСПОЛЬЗОВАНИЕ ТРАНСМОДЕЛИРОВАНИЯ В ИССЛЕДОВАНИИ ПРОЯВЛЕНИЙ СИСТЕМНОСТИ ЛЕКСИКИ

ГРАЧИК АКОПДЖАНЯН

Резюме

С целью обнаружения объективных критериев разграничения проявлений системности лексики применяется предложенный Г. Джаукяном метод трансмоделирования для построения универсальной лингвистической модели (УЛМ) полисемии и омонимии, по результатам овоеобразного исследования семантической структуры равноименных лексических знаков (РЛЗ).

Строится первичная гомогенная модель О, которая гипотетически включает в одну систему лексические явления полисемии и омонимии по совпадающим признакам равноименности и неоднозначности.

Серия из шести моделей и итоговые модели 7 (полисемии) и 8 (омонимии) показывают несостоятельность гипотезы о системной общности полисемии и омонимии, поскольку маркат релята полисемии складывается из системно совпадающих марков равноименности и многозначности, а маркат релята омонимии складывается из условно (несистемно) совпадающих марков неоднозначности и равноименности.